## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» Հոկտեմբերի 2017 թվականի N 133

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով.

Որոշում եմ՝

Մարգարիտա Հայկի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող 0.1300հա տնամերձ հողամասի և բնակելի տան՝ Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Երիտասարդական փողոց թիվ 14 հասցեն վերանվանել՝ Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Երիտասարդական փողոց թիվ 12/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

10 Հոկտեմբերի 2017 թվականի N 134

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Արայիկ Ժիրիկի Շահզեյդյանի դիմումը հողամասից կամովին հրաժարվելու մասին՝

Որոշում եմ

1. Քաղաքացի Արայիկ Ժիրիկի Շահզեյդյանի կողմից կամովին հրաժարված 07-042-0367-0008 կադաստրային ծածկագրով 0.1573հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում՝ իրավունքների պետական գրանցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Վ. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ջորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» Հոկտեմբերի 2017 թվականի N 135

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով`

Որոշում եմ

Արման Սարգսի Կատվալյանին սեփականության իրավունքով պատկանող 176քմ տնամերձ հողամասին և բնակելի օժանդակ շինություններին տրամադրել հասցե` Կոտայքի մարզ Ջրաղբյուր 1-ին թաղամաս թիվ 31/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 Հոկտեմբերի 2017 թվական N 136

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 29-ի դրական եզրակացությունը և Ձորաղբյուր համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 20-ի N40 որոշումը՝

Որոշում եմ

1. Ձորաղբյուր համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Արման Սարգսի Կատվալյանին սեփականության իրավունքով պատկանող 07-042-348-035 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 0.1110հա վարելահողից 0.0176հա վարելահողի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրի հողերի կատեգորիա՝օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.Հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը՝ 789360 /յոթ հարյուր ութսունինը հազար երեք հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ համայնքի բյուջե վճարելուց հետո, որը պետք է փոխանցվի Աբովյանի ՏԳԲ-ի, 900105221171՝հողի օտարումից եկամուտներ, հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

11 Հոկտեմբերի 2017 թվականի N 137

### ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍԻ ԿԱՏՎԱԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8.1,10,11,13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով, որ Արման Կատվալյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Զորաղբյուր 1-ին թաղ. թիվ 31/1 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք`

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արման Կատվալյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Զորաղբյուր 1-ին թաղ. թիվ 31/1 հասցեի հողամասում գտնվող S=158.19քմ «ինքնակամ բնակելի օժանդակ շինությունները» համարել օրինական` հիմք ընդունելով <<ԳԻՍ-ԱՐՏ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2.Պարտավորեցնել նրան համայնքի բյուջե վճարելու 158.19քմ ինքնակամ շինությունների համար, 1քմ-ը 1560 դրամ, ընդամենը` 246776 /երկու հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր յոթանասունվեց/ դրամ:

3.Գումարը պետք է փոխանցվի Զորաղբյուրի գյուղապետարանի, Աբովյանի ՏԳԲ, 900105221213` ինքնակամ կառույցների պետ գրանցում, հաշվեհամարին:

4.Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 30-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`                Ա. ՍՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ջորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

11 Հոկտեմբերի 2017 թվականի N 138

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 22-28-րդ կետերով, հիմք ընդունելով Ջորաղբյուր համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 24-ի N36 որոշումը և հողամասն աճուրդով վաճառելու մասին 2017 թվականի հոկտեմբերի 06-ի N18/2-1 արձանագրությունը՝

Որոշում եմ

1. 2017 թվականի հոկտեմբերի 06-ին կայացած աճուրդում հաղթող ճանաչված Հարություն Գեղամի Դավթյանին օտարել համայնքային սեփականություն հանդիսացող (ծածկագիր՝ 07-042-0391-0006) 1.36046հա գյուղ. նշանակության հողամասը:

2. Պարտավորեցնել Հարություն Գեղամի Դավթյանին համայնքի բյուջե վճարել 2229934 (երկու միլիոն երկու հարյուր քսանինը հազար ինը հարյուր երեսունչորս) դրամ՝ հողամասի գինը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ.` dzorackbyur@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

11 Հոկտեմբերի 2017 թվականի N 139

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 22-28-րդ կետերով, հիմք ընդունելով Ձորաղբյուր համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 24-ի N36 որոշումը և հողամասն աճուրդով վաճառելու մասին 2017 թվականի հոկտեմբերի 06-ի N18/2-2 արձանագրությունը`

Որոշում եմ

1. 2017 թվականի հոկտեմբերի 06-ին կայացած աճուրդում հաղթող ճանաչված Արմենուհի Արարատի Սմբատյանին օտարել համայնքային սեփականություն հանդիսացող (ծածկագիր` 07-042-0347-0048) 0.2446հա այլ գյուղ. նշանակության հողամասը:

2. Պարտավորեցնել Արմենուհի Արարատի Սմբատյանին համայնքի բյուջե վճարել 84766 (ութսունչորս հազար յոթ հարյուր վաթսունվեց) դրամ` հողամասի գինը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

12 Հոկտեմբերի 2017 թվականի N 140

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով`

Որոշում եմ

Ձորաղբյուր համայնքի 2017 թվականի բյուջեի սոցիալական պաշտպանություն ծրագրի 472900` այլ նպաստներ բյուջեից, հոդվածից համայնքի բնակիչ Անիչկա Արմենակի Դերմոյանին, որպես դրամական օգնություն հատկացնել 40000 /քառասուն հազար/ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` [illegible] ՔԱՅԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ`060-28-94-09
էլ.փոստ.` dzorackbyur@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

12 Հոկտեմբերի 2017 թվականի N 141

## ՄԱՐԻԱՄ ՅՈՒՐԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8.1,10,11,13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով, որ Մարիամ Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Երիտասարդության փողոց թիվ 3 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք`

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարիամ Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Երիտասարդության փողոց թիվ 3 հողամասում գտնվող S=3.88քմ «ինքնակամ բաց պատշգամբը», S=21.26քմ «ինքնակամ բնակելի տունը», S=7.10քմ «ինքնակամ աստիճանավանդակը», S=81.08քմ «ինքնակամ բնակելի տունը», S=3.72քմ «ինքնակամ բաց պատշգամբը», S=36.70քմ «ինքնակամ սառնան», S=102.11քմ «ինքնակամ սառնան», S=130.48քմ «ինքնակամ սառնան», S=8.34քմ «ինքնակամ բաց պատշգամբը», S=14.94քմ «ինքնակամ տնտեսական շին.-ը» և S=2.62քմ «ինքնակամ սանհանգույցը» և 4 հատ ինքնակամ բացված դուռը համարել օրինական` հիմք ընդունելով <<ԳԵՈԿԱԴ 55>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2.Պարտավորեցնել նրան համայնքի բյուջե վճարելու 3.88քմ ինքնակամ բաց պատշգամբի, 21.26քմ ինքնակամ բնակելի տան, 7.10քմ ինքնակամ աստիճանավանդակի, 81.08քմ ինքնակամ բնակելի տան, 3.72քմ ինքնակամ բաց պատշգամբի և 8.34քմ ինքնակամ բաց պատշգամբի համար, 1քմ-ը 2600 դրամ, ընդամենը`325988 /երեք հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր ութսունութ/ դրամ, 269.29քմ ինքնակամ սառնանների, 14.94քմ ինքնակամ տնտեսական շին.-ն և 2.62քմ ինքնակամ սանհանգույցի համար, 1քմ-ը 1560 դրամ, ընդամենը` 447486 /չորս հարյուր քառասունյոթ հազար չորս հարյուր ութսունվեց/ դրամ և 4 հատ ինքնակամ բացված դռան համար 10400 /տասը հազար չորս հարյուր/ դրամ:

3.Գումարը պետք է փոխանցվի Ձորաղբյուրի գյուղապետարանի, Աբովյանի ՏԳԲ, 900105221213` ինքնակամ կառույցների պետ գրանցում, հաշվեհամարին:

4.Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 30-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ